

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՂՄԻԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«14» հունիսի 2013 թ.

գ. Հողմիկ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հողմիկի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 44 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), նույն վարչության ՀԳՄՍԿՎ բաժնի գլխավոր մասնագետ Արամ Անտոնյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), նույն վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Հողմիկի գյուղական համայնքի ղեկավար Աշոտ Կյուրեղյանի, Հողմիկի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել է 2013 թվականի հունիսի 7-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Հողմիկի համայնքի նորընտիր ավագանին չի ընդունել է իր կանոնակարգը և չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջի կատարումը:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը գումարվում է ոչ ուշ, քան ավագանու լիազորություններն ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

- 2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2009 թվականի հունվարի 30-ի թիվ 1 նիստում հաստատել է համայնքի 2009-2012 թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 4 ծրագրային աշխատանքները ամբողջությամբ իրականացվել են (մշակույթի տան մասնակի վերանորոգում, խմելու ջրի 3կմ ներտնտեսային ցանցի նորոգում, ներհամայնքային ճանապարհների 1800մ հատվածի մասնակի նորոգում, դպրոցամերձ տարածքում գտնվող մարզաիրապարակի նորոգում):

Նշված աշխատանքները հիմնականում իրականացվել են համայնքի անհատ բարերարների աջակցությամբ և համայնքի բնակիչների ուժերով: Աշխատանքների իրականացման նպատակով համայնքի բյուջեից գումարներ չեն հատկացվել:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմված է բազմաթիվ թերություններով: Նրանում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին, չեն ներկայացվել համայնքը բնութագրող անհրաժեշտ վիճակագրական տվյալներ: Չեն տրվել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում, հողի հարկի, գույքահարկի և հողի վարձակալական վճարների ապառքների հավաքագրման կանխատեսումներ, ինչպես նաև ծրագրում ներառված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսվող ներդրումների ապահովման հիմնավորումներ: Փաստաթղթում նախատեսված ծրագրային աշխատանքներն ունեն ընդհանուր բնույթ: Նրանցում չեն նշվել առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված ծրագրային աշխատանքների կատարման ընթացքին:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջը և իր պաշտոնն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում համայնքի զարգացման 2013-2016 թթ ծրագիրը չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

- 3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները (ավագանու նիստեր՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 18-Ն, 09.12.2011թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 14 և 28.12.2012թ. արձ. թիվ 6, որոշում թիվ 14):

Համայնքի ավագանին 27.01.2011թ. թիվ 2 (արձ. թիվ 1), 10.01.2012թ. թիվ 2-Ն, (արձ. թիվ 1) և 15.01.2013թ. թիվ 1 (արձ. թիվ 1) որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 6 որոշումներ է ընդունել համայնքի 2011 և 2012 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ:

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող համայնքի ավագանու որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող ավագանու որոշումների հեթական համարից հետո <<Ն>> /նորմատիվ/ տառի նշումը բացակայում է /հիմք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մաս/:

- 4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին համայնքի բյուջեի

կատարման վերահսկման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել և այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չի կայացրել:

Համայնքի բյուջեի կատարման նկատմամբ համայնքի ավագանու կողմից իրականացված վերահսկողությունը սահմանափակվել է համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունները հաստատելով (ավագանու որոշումներ՝ 27.01.2011թ., արձ թիվ 1, որոշում թիվ 2, 10.01.2012թ., արձ թիվ 1, որոշում թիվ 2 և 15.01.2013թ., արձ թիվ 1, որոշում թիվ 1):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով համայնքի 2010, 2011, 2012 թվականների բյուջեների և 2013 թվականի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

- 5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին կայացրել է 1 որոշում կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ, որը վերաբերվել է համայնքի թվով 10 կարիքավոր ընտանիքներին միանվագ դրամական օգնության տրամադրմանը (ավագանու որոշում՝ 08.11.2012թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 7): Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու համապատասխան որոշման համաձայն, համայնքի 2010-2013 թթ բյուջեներից հատկացվել է ընդամենը 500.0 հազ. դրամ գումար:

Միանվագ դրամական օգնություն տրամադրելու հարցի վերաբերյալ համայնքի ավագանու որոշման մեջ համապատասխան հղում չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթին:

- 6) Համայնքի ավագանու 25.03.2011 թ., թիվ 4 որոշմամբ (արձ. թիվ 2) Հողմիկի համայնքի դպրոցի զբաղեցրած՝ համայնքի սեփականություն համարվող 1,77հա հողամասը նվիրատվության կարգով տրվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը:
- 7) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 8) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7¹-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն արձանագրվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. որոշում թիվ 15, արձ. թիվ 4, 09.12.2011թ. որոշում թիվ 12, արձ. թիվ 5, 28.12.2012թ. որոշում թիվ 12, արձ. թիվ 6.):

Համայնքի ավագանու 2011, 2012 և 2013 թվականների համար սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը համապատասխանում են «Տեղական ինքնակառավարման

մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին:

- 10) Համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանու կողմից որոշումներ չեն ընդունվել:
- 11) Հողմիկի համայնքում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ չկան և դրանց ղեկավարների թեկնածություններին հավանություն տալու անհրաժեշտություն չի առաջացել:
- 12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն):
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 4, 09.12.2011թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 11-Ն և 28.12.2012թ. արձ. թիվ 6, որոշում թիվ 11):
Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումներում ապահովվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը և տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը սահմանվել են բառերով, սակայն ընդունված որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներին և ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:
Ստուգված ժամանակաշրջանում տեղական հարկերի տեսակների և դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 14) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ ավագանին ընդունել է համապատասխան որոշումներ:
- 15) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ Հողմիկի համայնքի դպրոցի զբաղեցրած՝ համայնքի սեփականություն համարվող 1,77 հա հողամասը նվիրատվության կարգով տրվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը (25.03.2011 թ., արձ. թիվ 2, որոշում թիվ 4):
- 16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 16, 09.12.2011թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 13 և 28.12.2012թ. արձ. թիվ 6, որոշում թիվ 13):
Ընդունված որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներին և ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:

Համայնքի ավագանու նույն որոշումներով հաստատվել են նաև համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը:

Ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների թվաքանակի և (կամ) հաստիքացուցակի փոփոխություններ և (կամ) րացումներ չեն կատարվել և այդ հարցով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին որոշումներ չեն կայացվել:

18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

19) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010, 2011 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 17, 09.12.2011թ., արձ. թիվ 5, որոշում թիվ 10 և 28.12.2012թ., արձ. թիվ 6, որոշում թիվ 10):

1.Ցինանների բնագավառ

1) Հողմիկի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 18-Ն, 09.12.2011թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 14 և 28.12.2012թ. արձ. թիվ 6, որոշում թիվ 14) և դրանցում առաջարկվող փոփոխությունները (համայնքի ավագանու որոշումներ՝ 25.03.2011թ. արձ. թիվ 2, որոշում թիվ 3, 06.07.2011թ. արձ. թիվ 3, որոշում թիվ 5, 26.10.2011թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 7, 11.04.2012թ. արձ. թիվ 2, որոշում թիվ 3, 26.06.2012թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 5):

Համայնքի ղեկավարը բյուջեի կատարողականի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականի տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (ավագանու որոշումներ՝ 28.12.2010թ. արձ. թիվ 4, որոշում թիվ 4, 09.12.2011թ. արձ. թիվ 5, որոշում թիվ 11-Ն և 28.12.2012թ. արձ. թիվ 6, որոշում թիվ 11):

3) Համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:

Ստուգված ժամանակաշրջանում 2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,630.1 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 9,173.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 72.6 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 3,457.1 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 8,067.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 7,022.8 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 87.0 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 1,044.7 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 7,743.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 6,959.5 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 89.8 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 783.5 հազար դրամ:

2013 թվականի 5 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 3,629.6 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 2,911.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 80.2 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 718.6 հազար դրամ:

- 4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

Համայնքի ղեկավարը խախտել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջը՝ համաձայն որի տեղական տուրքերի և վճարների հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ համայնքի ղեկավարը իրականացնում է հսկողություն: Մասնավորապես 2010թ. և 2011թ. համայնքի բյուջեով նախատեսվել է, սակայն տեղական տուրքի գանձումն ամբողջությամբ չի ապահովվել:

- 5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

- 6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, կոմունալ վճարումների, էլեկտրաէներգիայի, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելուն և այլ ծախսերի համար:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

- 1) Ստուգված ժամանակաշրջանում Հողմիկի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:
- 2) Համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթաց չի իրականացվել:
- 3) Համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տարամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթաց չի իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվություն չի տրամադրվել:
- 5) Ստուգված ժամանակաշրջանում ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չեն ձևակերպվել:

- 6) Համայնքում ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր չեն հայտնաբերվել և հետևաբար, օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել
- 7) Հողմիկի համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 8) Համայնքի ղեկավարի կողմից կատարվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառում, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմում և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:
- 9) Համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 10) Հողմիկի համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:
- 11) Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի համայնքի ավագանու հաստատմանը ներկայացման գործառույթներ չեն իրականացվել:

3. Հողօգտագործման բնագավառ

- 1) Հողմիկի գյուղական համայնքը ՀՀ կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
- 2) Հողմիկի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 980.55հա, այդ թվում՝ վարելահող-38.01հա, խոտհարք-25.13հա, արոտ-881.06հա և այլ հողեր-36.35հա:
 Գյուղապետարանում առկա էր համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված 2 պայմանագրեր՝ 8.95հազ դրամ տարեկան վարձավճարով, որից 1 պայմանագիր՝ 1.06հա վարելահողերի համար 4.346հազ դրամ տարեկան վարձավճարով և 1 պայմանագիր՝ 2.58հա արոտների համար 4.6հազ. դրամ տարեկան վարձավճարով:
 Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 36.95հա վարելահողերը, 25.13հա խոտհարքները և 798.48հա արոտները օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրված չեն:
 Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝
 01.08.2010–31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 41.6հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 24.0հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 17.6հազ.դրամ:
 2011թ. բյուջեով նախատեսված 51.1հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 44.5հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի

հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 6.6հազ.դրամ:

2012թ. բյուջեով նախատեսված 30.9հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 31.4հազ դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 0.5հազ.դրամ:

01.01.2013-01.06.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 16.7հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 10.0հազ դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 6.7հազ.դրամ:

01.01.2013 թվականի դրությամբ վարձավճարի ապառքներ չկան:

01.08.2010թ.-01.06.2013թ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականության հողերի օտարումներ չեն իրականացվել:

- 3) Հողմիկի համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 983 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 798.48հա համայնքային սեփականության արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չէ: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել ապօրինի հողօգտագործումը կանխելու և արոտների օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:
- 4) 01.08.2010թ.-01.06.2013թ. ժամանակահատվածում Հողմիկի համայնքի ղեկավարի կողմից համայնքում ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:
- 5) Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:
- 6) Պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով ութ գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

4. Տրանսպորտի բնագավառ

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:
- 2) Համայնքում հասարակական տրանսպորտի, ինչպես նաև համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ ոլորտի գործունեության կազմակերպման և կառավարման ուղղությամբ գործառույթներ չեն իրականացվել:
- 3) Իրավասու մարմինների կողմից համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման, հանման հաստատման և թույլատրման առաջարկություններ չեն ստացվել և այդ ոլորտում համայնքի ղեկավարի կողմից գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների վերաբերյալ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ

ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

5. Առևտրի և ծառայությունների բնագավառ

1. Ստուգված ժամանակաշրջանում օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացվել համայնքում գործող թվով 2 առևտրի օբյեկտների նկատմամբ: Հսկողության արդյունքում թերություններ չեն հայտնաբերվել և սահմանված կարգով արձանագրություններ չեն կազմվել:

2. Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար դիմած թվով 2 տնտեսվարող սուբյեկտների ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:

3. Ստուգված ժամանակաշրջանում համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու համար դիմումներ չներկայացնելու պատճառով, համապատասխան թույլտվություններ չեն տրամադրվել:

4. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման, բաղնիքների (սաունաների), խաղատների ժամը 24.00-ից հետո աշխատելու համար դիմումներ չներկայացնելու պատճառով, համապատասխան թույլտվություններ չեն տրամադրվել:

5. Համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառքի համար դիմումներ չներկայացնելու պատճառով, համապատասխան թույլտվություններ չեն տրամադրվել:

6. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի վաճառքի համար դիմումներ չներկայացնելու պատճառով, համապատասխան թույլտվություններ չեն տրամադրվել:

7. Այլ բնագավառներ

1) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 14 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 30 հարցեր, ընդունվել են նորմատիվ և անհատական բնույթի նույնքան որոշումներ: Այդ թվում՝ 2010 թվականի 4 ամսում անցկացվել է ընդամենը 1 նիստ, ընդունվել է 4 որոշում, 2011 թվականին՝ 5 նիստ, 12 որոշում, 2012 թվականին՝ 6 նիստ, 13 որոշում, իսկ 2013 թվականի 3 ամսում՝ 2 նիստ, 2 որոշում:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 1 գրանցամատյան, որը սահմանված կարգով թելակարված և համայնքի ղեկավարի կողմից կնքված է, սակայն համարակալված չէ:

Համայնքի ղեկավարը թերություններով է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանված համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան որոշումների ընդունման, արձանագրությունների կազմման և կարգադրությունների արձակման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու կողմից 2010, 2011 և 2012 թվականներին ընդունված առանձին որոշումներ ՀՀ Շիրակի մարզպետարան չի ներկայացրել կամ ներկայացրել է սահմանված 7-օրյա ժամկետից ուշացումով:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգը և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ բնույթի առանձին իրավական ակտեր /համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում, համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդով օտարում և այլն/ պետական իրավական փորձաքննության համար չի ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են ձևավորվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով ավագանու նիստերի օրակարգերը հաստատվել են ավագանու համապատասխան որոշումներով:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը և 01.09.2010-01.06.2013թթ ընկած ժամանակահատվածում չի ապահովել ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ ավագանու նիստի անցկացումը:

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում չեն տարվել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի մի շարք որոշումներին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ, իսկ համայնքի ղեկավարի՝ 2012 թվականի հունվարի 26-ի՝ Հողմիկի համայնքի 2012 թվականի բյուջեի եռամսյա համամասնությունները հաստատելու մասին որոշման մեջ հղում է տրված ՀՀ ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին:

Համայնքի ավագանու կողմից ընդունված իրավական ակտերի բնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տառերի նշումները գրեթե բոլոր որոշումներում բացակայում են:

Իրավական ակտի փոփոխություններին և լրացումներին վերաբերվող ավագանու որոշումների հիմնական մասը չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 26.10.2011թ. (արձ. թիվ 4), 10.01.2012թ. (արձ. թիվ 1), 11.04.2012թ. (արձ. թիվ 2), 29.05.2012 թ. (արձ. թիվ 3), 26.06.2012 թ. (արձ. թիվ 4) և այլն):

2) Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1՝ կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական

ակտերն է սահմանված ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

- 3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը կազմել և սահմանված ժամկետում համայնքի ավագանու 2009 թվականի հունվարի 30-ի թիվ 1 նիստի քննարկմանն է ներկայացրել համայնքի 2009-2012թթ զարգացման ծրագիրը:
Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջը և համայնքի զարգացման 2013-2016 թթ. ծրագիրը իր պաշտոնը ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:
- 4) Համայնքի ղեկավարի աշխատակազմի նոր կանոնադրությունը հաստատվել է համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 2 նիստում (որոշումը համարակալված չէ), սակայն որոշման հավելվածի առաջին էջին նշված է, որ կանոնադրությունը հաստատվել է 2012 թվականի ապրիլի 25-ի թիվ 4 որոշմամբ:
- 6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների 2011, 2012 և 2013 թվականների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը: Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների սահմանված կարգով հաստատված և գործողության մեջ դրված հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:
- 7) Հողմիկի համայնքում համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ չկան: Դրանց ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 8) Համայնքում համայնքային ենթակայության առևտրային կազմակերպություններ չլինելու պատճառով այդ կազմակերպությունների խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշումների նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարի կողմից համայնքի ղեկավարի տեղակալի և աշխատակազմի քարտուղարի պաշտոններում նշանակումներ կամ ազատումներ չեն կատարվել:
- 10) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարների, համայնքի ավագանու համաձայնությամբ, նշանակումներ և ազատումներ չեն կատարվել:
- 11) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշումների նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 12) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել, միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել և այդ հարցերի վերաբերյալ համայնքի ավագանուն որոշումների նախագծեր չեն ներկայացվել:
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն թվով

1 առաջարկություն է ներկայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ, որը վերաբերվել է Հողմիկի համայնքի դպրոցի զբաղեցրած՝ համայնքի սեփականություն համարվող 1,77 հա հողամասը նվիրատվության կարգով ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրելուն:

Հարցի վերաբերյալ ստուգման արդյունքների մանրամասները ներկայացված են «Վարչական հսկողություն» բաժնի 15-րդ կետում:

- 14) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 15) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 16) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի ղեկավարի կողմից շինությունների համարակալման (հասցեավորման) վերաբերյալ ընդունվել է 1 որոշում (25.05.2012թ., թիվ 40, որով թիվ 08-066-0020-0011 ծածկագրով անշարժ գույքին տրվել է փողոց 3, հողամաս 18 հասցեն:
- 17) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 11 որոշում և արձակվել 16 կարգադրություն, որոնք սահմանված կարգով արձանագրվել են համապատասխան գրանցամատյաններում:
Գործող կարգի համաձայն համարակալված, թելակարված և կնքված է միայն համայնքի ղեկավարի կարգադրությունների գրանցամատյանը:
Համայնքի ղեկավարի առանձին որոշումներին և կարգադրություններին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման խախտումներ, լիարժեք չեն հղումները օրենսդրության համապատասխան դրույթներին:
Այսպես. Համայնքի բյուջեի եռամսյա համամասնությունները հաստատելու մասին համայնքի ղեկավարի 11.01.2010թ. թիվ 1, 21.01.2011թ. թիվ 1, 26.01.2012թ. թիվ 1 և 23.01.2013թ. թիվ 1 որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին, չի ապահովվել նաև համայնքի բյուջեի եռամսյա համամասնությունների հաստատման համար նշված օրենքով սահմանված ժամկետը:
- 18) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:
- 20) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:
- 21) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Սահմանված կարգով համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

Համայնքի ղեկավարի 17.10.2012թ. թիվ 7 որոշմամբ համայնքում ստեղծվել և գործում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով և հաստատվել է նշված հանձնաժողովի անհատական կազմը:

2012 թվականի հոկտեմբերի 18-ին համայնքում անցկացվել է քաղաքացիական պաշտպանության շտաբային ուսումնավարություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում» թեմայով:

22) Գյուղապետարանում վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և սահմանված կարգով կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

23) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

24) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվել են քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության են առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

25) Համայնքում օրենքով սահմանված կարգով ստեղծվել և գործում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու վերաբերյալ իրավական ակտեր չեն ընդունվել:

26) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:

27) Գյուղապետարանում համայնքի զինապարտների գրանցամատյանը ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան չի վարվում, առկա են գրանցամատյանի վարման մի շարք թերություններ: Զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները սահմանված ժամկետներում ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով հաստատվել է համայնքի ավագանու 23.04.2013թ. թիվ 2 նիստում (որոշման համարը նշված չէ):

2. ՀՀ կառավարության սահմանած կարգով աշխատակազմում չեն վարվում համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման գրանցամատյաններ:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 11 որոշում և արձակվել 16 կարգադրություն, որոնք արձանագրվել են համապատասխան

գրանցամատյաններում: Աշխատակազմի քարտուղարի կողմից հրամաններ չեն արձակվել, չի վարվում նաև հրամանների արձանագրման գրանցամատյան:

3. Ուսումնասիրության ենթարկված իրավական ակտերը, որոնք համապատասխանաբար վերաբերվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը և գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն, արձանագրվել են համապատասխան գրանցամատյաններում:

Համայնքի ղեկավարը վերազանցել է իր իրավասությունները և իրականացրել է այնպիսի լիազորություններ, որոնք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ վերապահված են աշխատակազմի քարտուղարին (աշխատակազմի աշխատակիցներին նշանակում, ազատում, խրախուսման միջոցների կիրառում, կարգապահական տույժերի նշանակում և այլն):

Այսպես. համայնքի ղեկավարի 07.01.2011թ. թիվ 127, 01.11.2012թ. թիվ 132 կարգադրություններով գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող գլխավոր մասնագետին տրամադրվել են արձակուրդներ, իսկ արձակուրդի ընթացքում տվյալ աշխատակցի պարտականությունների կատարումը այլ աշխատակիցների չի վերապահվել:

4. Սահմանված կարգով համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը չի ներկայացրել:
5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Հողմիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 2-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2-1) և գլխավոր մասնագետ-հաշվապահ (ծածկագիր՝ 2.3-1): Նշված 2 համայնքային ծառայության պաշտոններն օրենքով սահմանված կարգով զբաղեցված են:

Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2011, 2012 և 2013 թվականների համար հաստատված համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Հողմիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նշված անվանումներին: Համայնքային ծառայողների մասով 2011-2013 թվականների համար հաստատված պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

6. Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի նոր անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից, սակայն դրանց հաստատման վերաբերյալ որոշուման ընդունման օրը նշված չէ և համայնքի ղեկավարի որոշումների գրանցամատյանում արձանագրված չէ:

Համայնքի ղեկավարի կողմից հաստատված համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը կատարվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի» առանձին դրույթների խախտումներով: Համայնքային ծառայողների 2 անձնական գործերում բացակայում են

համայնքային ծառայողների ատեստավորում անցնելու մասին ատեստավորման հանձնաժողովի որոշումների քաղվածքները, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրամադրվող դատվածության բացակայության մասին տեղեկանքները, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման մասին իրավական ակտերի քաղվածքները: Անձնական գործերում առկա փաստաթղթերի վերգրերը լրացված են թերի, իսկ գործերում առկա փաստաթղթերը չեն համարակալված:

8. ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն համայնքի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 27 որոշմամբ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական նոր կազմերը չեն հաստատվել:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին որոշում չի կայացրել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերի վերաբերյալ:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից համապատասխան որոշում չի ընդունվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու վերաբերյալ:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը չի հաստատվել է չի ապահովվել դրա պատշաճ իրագեկումը աշխատակազմի աշխատակիցներին:

11. Աշխատակազմում չեն վարվում «Համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման», «Համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման» և «Համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման» համարակալված մատյաններ:

12. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ մրցույթի արդյունքներով համայնքային ծառայության պաշտոնների նշանակված անձանց կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:


13. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև N N 1, 2) տվյալներն արժանահավատ են:

14. Հողմիկի համայնքում համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներն ու ատեստավորումներն անցկացվել և փաստաթղթերի փաթեթները կազմվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն և 2006 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու և համայնքային ծառայողի ատեստավորման կարգերին համապատասխան:


15. Գյուղապետարանում զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը վարվում է մի շարք թերություններով և ՀՀ Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշմամբ հաստատված կարգին անհամապատասխան:

16. Ստուգված ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ Շիրակի մարզի Հողմիկի գյուղապետարանում համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության և կադրային գործի վարման բնագավառում ուսումնասիրություններ չեն կատարվել:



ԿԱՌԼԵՆ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ




ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ



ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ




ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԼՅՈՎԱ ՀԱԿՈՒԲՅԱՆ



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՇՈՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ